ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 42-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2006.06.01/15(224) Հոդ.194	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Գյուղատնտեսության նախարար	*Ընդունման ամսաթիվը*	14.03.2006
Ստորագրող մարմինը	Գյուղատնտեսության նախարար	*Ստորագրման ամսաթիվը*	14.03.2006
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.06.2006	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
6 մայիսի 2006 թ.
Պետական գրանցման թիվ 10606135

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 մարտի 2006 թ.
ք. Երևան

N 42-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի դրույթին և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի օգոստոսի 29-ի «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 659-Ա որոշմամբ հաստատված ցանկի 11-րդ կետի պահանջին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Սահմանել մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտի ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Նախարար **Դ. Լոքյան**

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2006 թ. մարտի 14-ի
N 42-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՄՇԱԿԱԲՈՒՍՅԵՐԻ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ արտադրողի կողմից հայտի ներկայացման ընթացակարգը:

2. Հայտը կարող է ներկայացնել ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավատարմագրման կարգը և սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հայտի ձևը հաստատելու մասին» N 2239-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված ձևի:

3. Մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն անմիջական կամ փոստային առաքմամբ, անձամբ կամ ներկայացուցչի միջոցով:

4. Մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարելու վերաբերյալ հայտը ներկայացվում է տվյալ մշակաբույսի ցանքսից առնվազն մեկ ամիս առաջ:

5. Ներկայացված հայտը համարակալվում է և գրանցվում գրանցամատյանում, որը վարում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

6. Գրանցված և համարակալված հայտի տեղեկություններն օգտագործվում են սերմերի հավաստագրման գործընթացում: